

պատգամաւորութիւն մը զրկել Կիպրոս , խնդրելով որ Պետրոս Թաղաւորն իրենց օգնութեան հասնի ու գրաւէ բերդը , որուն բնակիչներն ինքզինքնին Թաղաւորին տրամադրութեան տակ կը գնէին : Երկու պատգամաւորներուն — Միքայէլ Պսարացիս ու Կոստաս Ֆիլիցիս — Կիպրոս հասնելէն մի քանի օր վերջը , նոյն ամսուն 15-ին Պետրոս Թաղաւորին կողմէ զրկուած խումբ մը նաւեր , հրամանատարութեամբ Բոբերտ Լուսինեանի , Կիլիկեան ծովեզրը մօտենալով Կոռիկոսին տիրացան եւ հանդարտեցուցին յուզուած ժողովուրդը (1) :

Պեմունդ , սպանուած Գուխտոնի եղբորորդին եւ Հայաստանի խակահան Թաղաթառանդը , Կիպրոսի Թաղաւորին քով ապաստան գտնելով՝ Կոստանդնի գէմ մեքենայութիւններ լարելու յարմար ժամանակն հասած համարեց , եւ Պետրոսի աջակցութեամբ սկսաւ հայ իշխանները գրգռել իրենց Թաղաւորին դէմ : Յաւալի է , որ Պեմունդ իր գործակալներուն միջոցով յաջողեցաւ նոր հոսանք մը ստեղծել Կիլիկիայի մէջ : Աւագանիին մէկ որոշ մասը բացարձակապէս ապստամբեցաւ Կոստանդնէն , եւ յատուկ պատգամաւորներու միջոցով իմաց տուաւ թէ՛ Պետրոսին եւ թէ՛ Պեմունդին , որ իբր թէ Հայերը կը փափագին իրենց Թաղաւորը դահէն վար առնել եւ տեղը գնել Լուսինեաններու ցեղէն Թաղաթառանդ Պեմունդը , ազաչելով միանգամայն որ Պետրոս իր ազդեցութիւնը բանկցնէ եւ իրենց օրինաւոր Թաղաւորը պսակել տայ իրենց զրկէ :

Պետրոսի փափազն էր արդէն կա՛մ Հայոց դահին տիրանալ , եւ կամ գոնէ իր ազդակներէն մէկը տեսնել անոր վրայ : Ուստի՝ իր նպատակին հասնելու համար 1362-ի հոկտ . 24-ին Պեմունդը հեան տուած ճամբայ ելաւ դէպի Եւբոսա , որպէս զի Աւինետն նստող Ուրբանոս Ե պապին (1362—1370) ձեռքովը Հայոց Թաղաւոր օծել տայ զանիկայ , եւ խորամանկութիւնով մը տիրանայ Կիլիկիայի : Բայց տակաւին Ֆրանսա չհասած՝ Վենետիկի մէջ հիւանդացաւ Պեմունդ , զոր ստիպուեցաւ հոն թողուլ Պետրոս եւ առանց անոր շարունակել իր ճանրան :

Վենետիկի մէջ Պեմունդի վիճակն սկսաւ ծանրանալ . եւ վերջապէս

(1) Μαχαρα, եր. 59: Այս ժամանակագիրը կրսէ , թէ 1360-ին Հայոց Թաղաւորութիւնը Լեւոնի մը ձեռքն էր , որ բնդ ամենը « 200 ֆալաֆ եւ ափուրթին » ունէր , բայց բոլորն ալ կորսնցուց : (Անդ) : Տարակոյս չկայ թէ հոս յիշուած Լեւոնը կա՛մ Կոստանդին Գ-ի որդի Լեւոնն է , եւ կամ պէտք է կարգալ՝ Կոստանդին Գ :